

Տեղեկատվություն

«Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2016թ վերաբերյալ

Ներքին աուդիտի բաժինը ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությունները, 2016թ ընթացքում ներքին աուդիտի բաժնին աուդիտ է իրականացրել 47 միավորներում ներառելով 2013, 2014, 2015 թվականները:

Ներքին աուդիտի բաժինը համակարգի գնահատման աուդիտ է իրականացրել 38 «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ներում, մարզպետարանի աշխատակազմի 2 բաժիններում, 2 սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում, իսկ 5 բժշկական կենտրոն ՓԲԸ-ներում իրականացրել է ֆինանսական աուդիտ:

Աուդիտորներն աուդիտորական ուսումնասիրությունների ընթացքում հայտանաբերել են բազմաթիվ թերություններ, որի վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Արձանագրություններում տեղ գտած բացահայտումների ու եզրակացությունների հիման վրա կազմվել են նախնական և վերջնական հաշվետվություններ:

Վերջնական հաշվետվությունները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված նիստերում և կազմվել են արձանագրություններ, այնուհետև կազմվել են գործողության ծրագրեր:

Ըստ վերջնական հաշվետվությունների ներքին աուդիտի ենթարկված 47 միավորներում բացահայտվել են 444 թերություն, որոնց շտկելու նպատակով գործողությունների ծրագրով սահմանվել են 442 առաջարկություն: Աուդիտի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է 3811908 ՀՀ դրամի խախտում: Ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված նիստերի արդյունքում առաջարկվել է 3057195 ՀՀ դրամ վերականգնել պետական բյուջե, որից վերականգնվել 2788317 ՀՀ դրամ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝

Ս. Մուրադյան